«և ի նմին իսկ յաւուր պատուեաց զինակիր Սոհիէ Դուլկարտ, որ էր եկեալ կուսէ լերանց, արարեալ ասպետ յորով իսկ ձեռամբ և կարգեաց զնա Մարաջախտ թագաւորութեան հայոց»[84]։

Մի շարք վկայություններ հաղորդում են այն մասին, որ ոչ միայն հայ ազնվականները, այլև ֆրանկ-ֆեոդալները ստացել են ձիավորության աստիճան Հեթում Ա-ից, թեև նրանք չէին հանդիսանում վերջինի վասալները[85]։

Վերոհիշյալ վկայություններից երևում է, որ ձիավորի կամ ասպետի կոչումը ստանում են ոչ միայն ազատները, այլև մեծ իշխանները՝ հայրենատեր բերդատերերը, որով ցույց է տալիս, որ Կիլիկիայում գոյություն է ունեցել ասպետության երկու աստիճան։ Առաջին՝ բարձր աստիճանին արժանանում էին խոշոր հողատեր իշխանաց իշխանները, սպարապետներն ու մարշալները։ Երկրորդ աստիճանը ստանում էին այն ձիավոր-լիճ ճորտերը, որոնք «ի հայս ազատ» էին կոչվում։ Վերջիններս, բացի զինվորական ծառայությունից, կատարում էին գործակալական պաշտոններ։ Նրանք հաճախ դառնում էին օտար երկրներում թագավորին ներկայացնող դիվանագետ պատգամավորներ, կամ դեսպաններ։ Այսպես, «իսկ ասպետացն այնոցիկ երկոցունց մեկնեալ ի պապէն շրջան առ արքայն Դաղղիոյ և առ այլոց յիշխանացն Արևմտից խնդրել ի նոցանէ ձերն օգնականութիւն»[86]։ Կամ թե նույն 1343 թվականին «և եղև իբրև լուան նուիրակին զխնդրուածս թագաւորին և զիշխանացն հայոց, եռայն ողջոյն և դարձ արարին առ պապն և մի ոմն ասպետ ընդ նոսա, պատգամաւորն հայոց սեպուհն, Կոստանդին Կարսիլլի...»[87] կամ թե, 1373 թվին, «և իսկ և իսկ միաձայն խորհուրդով պատգամաւորս արձակեսցին ասպետ մի որ կոչէր սեպուհ Լևոն Համոսացի ընդ նմա արս երկուս ի քաղաքէն Սսոյ և տանուտէր զոմն ի Պրեստրէ առ երիտասարդ արքայն Պետրոս...»[88]։

Որ ասպետները Կիլիկիայի հայկական թագավորության վերջին շրջանում կազմում էին առանձին դաս պալատում և մասնակցում էին երկրի առաջ կանգնած քաղաքական հարցերի լուծմանը, վկայում է նույն պատմիչը, նշելով ասպետներին մյուս դասերից հետո. «Եռ յաւուրս միում գումարել ի ժողով ի դահլիճն արքունական զեպիսկոպոսունս և զվարդապետս աշխարհին զատանին և զասպետս և զտիկնայս և ժողովուրդն առհասարակ»[89]։

Ասպետները, որպես թագավորի և առավել խոշոր հողատեր ֆեոդալների վասալներ, որպես օտարվող հողի հետ առնչություն ունեցող մանր հողատերեր և սենյորի գործակալներ, ստորագրում են հողային նվիրատվությունների և այլ շնորհանքների տակ, իբրև վկաներ[90]։ Այդ վավերագրերի մեջ առավել ուշագրավ է այն շնորհագիրը, որ 1271 թվին Սարվանդիքարի տեր Ճոֆրեն շնորհում է Տեվտոնյան օրդենին՝ Սարվանդիքարում մաքսատուն-բաժատուն ունենալու մասին, որտեղ հանդես են գալիս վերևում մեր կողմից դասավորած առաջին աստիճանի ասպետներ։ «Գրեցաւ ի մեծի թուականութեան

[84] «Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն հայոց», 1891, Ս. Պետերբուրգ, էջ 115, Documents Arméniens, t. II, p. 67.

[85] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 485։

[86] «Յովհաննու Դարդելի, ժամանակագրութիւն», էջ 41—43։

[87] «Յովհաննու Դարդելի, ժամանակագրութիւն», էջ 46—47։

[88] Նույն տեղում, էջ 69։

[89] Նույն տեղում, էջ 167։

[90] Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 238—239, V. Langlois. Le Trésor des chartes, p. 143.